ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 09-L

«26» 02 2026թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Երևան քաղաքի դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը Սյունիքի մարզի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու, ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պարետի 1 թափուր հաստիքը նույն բաժնի պահեստապետի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 16-րդ գլխի 60-րդ կետի «Դատախազության դատախազ 9» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 8» բառերով, իսկ «Ընդամենը 24» բառերը՝ «Ընդամենը 23» բառերով,

2) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 23-րդ գլխի «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 105» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 104» բառերով,

3) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 31-րդ գլխի 120-րդ կետի «Դատախազության դատախազ 2» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 3» բառերով, իսկ «Ընդամենը 9» բառերը՝ «Ընդամենը 10» բառերով,

4) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 33-րդ գլխի «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 120» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 121» բառերով,

5) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 105» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 104» բառերով, իսկ «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 120» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 121» բառերով,

6) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 3.3-րդ գլխի 15.1-րդ կետի «Պարետ 22» բառերը փոխարինել «Պարետ 21» բառերով,

7) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 3.3-րդ գլխի 15.2-րդ կետում լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ. «

15.2.	Պահեստապետ	1

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**